

մարդեր մորթուէին: Յիշեցուցի իրեն 76ի սարսափները, որոնք պատմութեան մէջ Պուլկար անգթութիւններ ա-նունով կը մնան արձանագրուած: Թօթուեց գլուխը: ՄՈՌՅԱԾ էՐ: Մաթիկը սպայ մը չէր ազատագրուած ժողովուրդի մը յաղթական բանակին մէջ ծառայող: Ու մոռցած էր, իր կարգին: Այսպէս է, որ բառն ալ՝ թուրքը քիչ կ'երեւար իր այնքան բազմակեղրոն յարձակողակա-նին մէջ, ուր չէին խնայուեր շանթեր փաշաներուն, մոլ-լաներուն, բռնապետներուն, Համիտին, աղաներուն, պէ-յերուն, սրիկաներուն, խուլիգաններուն՝ բոլորն ալ թուր-քէն տարբերական բառով մը, հեռու, գրեթէ անծանօթ այն զգայնութեան, որ մերն էր: Վասնզի ջարդը, մեր գե-րութեան տախտակները, չղթաները, մա'նաւանդ հո-գեվիճակը արեւմտահայերուն համար անհատական չեն, ըսել կ'ուզեմ՝ անհատներով պայմանաւոր: Լաւ փաշա-ներ չա'տ: Բայց փաշայութիւնը մեր պապերուն համար մանկահաւաքն էր, աղջիկներուն առեւանգումն էր, բեր-քին թալանը ու քիչ մըն ալ աւելի՝ քան այն կոշտ, պարզա-պարզ տարագը, որով մեր անկարողութիւնը կը կարծենք դիմաւորել բառերով, քլիշէով, յոյսով...: Յանցառ բա-ցառութիւններէ դուրս, անոնք ալ մարդերու ամէնէն ստորին խաւերուն պատկանող քանի մը պատիկ ոճրա-գործ -որոնք ջարդարարներու մէջ իրենց հակառակորդ-ներուն իբր հակացոյց զոհուելիք կիներ ազատեր էին սպանդէն- ջարդին մասին մեր ներքին վկայութիւնը ո'չ մէկ կողմէ չհերքուեցաւ: Ամբողջ ժողովուրդ մը, սուլթա-նէն մինչեւ յետնագոյն գիւղին քիսիսան հաղորդ էին ջար-դը ստեղծող, արդարացնող, փառաբանող հոգեվիճակին: Ինծի տրուեցաւ զգալ ուրիշ բան սակայն, ջարդի մը ա-տեն դարձեալ, այս պատմումին թուականէն տասը տարի ետք, ուր ջարդի զգայնութիւնները ողողեցին զիս: Կը ջարդուէին թուրքերը, Արեւելեան Եւրոպայի մէկ գիւղա-քաղաքին մէջ: Պուլկարները յաղթական մտած էին քա-ղաք ու արտօնած թուրքերէն այնքան սիրուած արեան բաղնիքը: Կը պտտէին շուկան: Կը թալանուէին խա-